ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ՂԱԶԱԽԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում և Անդրկովկասում կյանքի կոչեց սոցիալ-տնտեսական որոշակի տեղաշարժեր Արևելյան Հայաստանի համարյա բոլոր շրջաններում՝ այդ թվում նաև Զանգեզուրի ու Ղազախի գավառներում[1]։ Նման տեղաշարժերի խորության աստիճանը պայմանավորվում էր համառուսական շուկայի հետ այդ շրջանների ունեցած փոխադարձ կապով։ Վերջինիս անմիջական ազդեցության տակ տեղի էր ունենում բնատնտեսության քայքայման պրոցես, ուժեղանում էին ապրանքա-դրամական հարաբերությունները։

XIX դարի վերջերին Զանգեզուրի գավառում գյուղատնտեսության ճյուղերից առավել ընդգծված ապրանքային բնույթ էր ստացել հացահատիկային տնտեսությունը։ 1880 թ. գավառն արտադրել է 354 650 չետվեր ցորեն[2], որն ամենաբարձր ցուցանիշն էր ինչպես Ելիզավետպոլի նահանգում, այնպես էլ Արևելյան Հայաստանի շրջանների համեմատ։ 1890 թ. հացահատիկի արտադրությունը գավառում անցել է 534 հազար չետվերից[3]։ Բնակչության հիմնական զբաղմունքներից էր նաև շերամապահությունը, որն ամբողջովին ենթարկվում էր շուկային։ 1885 թ. այստեղ հավաքվել է 10520 փութ շերամի բոժոժ[4]։ Զանգեզուրի աշխարհագրական դիրքը բնակչությանը հնարավորություն էր ընձեռում զբաղվելու գյուղատնտեսության համարյա բոլոր ճյուղերով։ Միայն Մեղրիի տեղամասում բամբակի ցանքերը զբաղեցնում էին 200 դեսյատին, իսկ խաղողինը՝ 300[5]։ Գավառի հովտային շրջաններում գյուղացիները ցանում էին նաև բրինձ։ Ապրանքային բնույթ էին ստացել նաև այգեգործությունն ու անասնապահությունը։

Ղազախի գավառի դեմքը նույնպես բնորոշում էր հացահատիկային տընտեսությունը։ Եթե 1880 թ. այստեղ հավաքվել է 108 700 չետվեր հացահատիկ,

---

1 *Խոսքը վերաբերում է Ղազախի գավառի լեռնային և նախալեռնային գոտուն, որը հիմնականում համապատասխանում է ՀՍՍՀ Նոյեմբերյանի, Իջևանի, Շամշադինի և Կրասնոսելսկի շրջաններին։ Դարավերջի Զանգեզուրի և Ղազախի գավառների գյուղացիության վերաբերյալ տե՛ս հետևյալ աշխատությունները. Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, հատ. Բ, Երևան, 1968։* Ц. Агаян, Крестьянская реформа в Азербайджане, Баку, 1956. А. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959. *Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, և այլն։*

2 *ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 25, գ. 297, թ. 150։*

3 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1284, ց. 228, գ. 125, թ. 88։*

4 *Նույն տեղում, գ. 212, թ. 40։*

5 *Տե՛ս* «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, ч. I, Тифлис, 1886, *էջ 89, 92։*

ապա 1884 թ.՝ 299 500, իսկ 1890 թ.՝ 326 385 չետվեր[6]։ Ապրանքային տնտեսության զարգացումը ուղեկցվում էր գյուղատնտեսության մեջ կատարելագործված գործիքների ներգրմամբ։ 1885 թ. Ղազախի գավառում կար 30 եվրոպական գութան[7]։ Այստեղ զարգացած էր նաև անասնապահությունը, ըստ որում բարձր էր հատկապես խոզաբուծության ապրանքայնությունը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը իր կնիքն էր գնում գյուղացիական մասսաների վրա։ Վ. Ի. Լենինը նշում է, որ «կապիտալիզմը և մասսայի աղքատանալը ոչ միայն չեն բացառում, այլ ընդհակառակը, փոխադարձաբար պայմանավորում են միմյանց»[8]։ Հողասակավությունը, հարկային ծանր համակարգը, վաշխառուական կապիտալը, ինչպես նաև բնակլիմայական անբարենպաստ պայմանները օժանդակում էին Զանգեզուրի և Ղազախի գավառների գյուղացիության քայքայման պրոցեսի խորացմանը։

Զանգեզուրի գավառի բնակչության գերակշռող մասը պատկանում էր պետական գյուղացիության կատեգորիային (1880-ական թթ. տվյալների համաձայն՝ 70015 շունչ), իսկ մասնատիրականը՝ մոտ 35000[9]։ Պետական գյուղացիության 44 տոկոսը հայեր էին, 26 տոկոսը՝ քրդեր, 22 տոկոսը՝ ադրբեջանցիներ[10]։ Ղազախի գավառի հայ բնակչությունը նույնպես կենտրոնացած էր պետական գյուղերում (բացառություն էր կազմում կալվածատեր Քալանթարյաններին պատկանող Զորաթան գյուղը)։ Նույն թվականների տվյալների համաձայն գավառի պետական 69 գյուղերից հայկական էին 43-ը, 50024 պետական գյուղացիներից 30494-ը՝ այսինքն մոտ 61 տոկոսը հայեր էին[11]։

Ինչպես մյուս շրջաններում, այնպես էլ Զանգեզուրի և Ղազախի գավառներում XIX դարի վերջերին գյուղացիությունը հողի մեծ կարիք էր զգում։ Ալ. Երիցյանը, որը մոտիկից ծանոթ էր Ղազախի գավառի պետական գյուղացիության տնտեսական կացությանը, նշում էր, որ գավառի պետական բոլոր գյուղերը տառապում են հողասակավությունից[12]։ Գավառի պետական գյուղացիության մեկ շնչին դարավերջին ընկնում էր 0,65 դեսյատին վարելահող, իսկ ընդհանրապես հող՝ 1,46 դեսյատին[13]։ Մի շարք գյուղերում այդ թվերը համեմատաբար ավելի ցածր էին։ Օրինակ, Գոշավանքում մեկ շնչին ընկնող վարելահողը կազմում էր 0,37 դեսյատին, Ղուլալիում՝ 0,38, Հին Դիլիջանում՝ 0,44, Քարվանսարայում՝ 0,47, Մովսեսում՝ 0,49, Ղոշղոթանում՝ 0,50 դեսյատին և այլն։ Իսկ մեկ շնչին ընկնող հողաբաժինը Ղալաչա գյուղում կազմում էր ընդամենը 0,68 դեսյատին, Գոշավանքում՝ 0,77, Կողբում՝ 0,82, Բարանայում՝ 0,91, Կոթիգեղում՝ 0,94 և այլն[14]։

---

6 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, Тифлис, 1886, էջ 151։ ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 125, թ. 88։

7 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 156։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 122։

9 Տե՛ս «Материалы...», т. IV, ч. I, էջ 26, 32։

10 Տե՛ս И. Антелава, Государственные крестьяне Грузии в XIX веке, т. II, Тбилиси 1962, էջ 282։

11 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 45։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 70։

13 Տե՛ս И. Антелава, նշվ. աշխ., էջ 307։

14 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 249—252։

Իրենց հողային վատթար պայմանների բարելավման համար գյուղացիները համառորեն խնդրագրեր ու բողոքագրեր էին ուղարկում ամենատարբեր հասցեներով, տարիներ շարունակ պայքարում իրենց ամենակենսական հարցի՝ հողային ապահովվածության համար։ Ղազախի գավառի Հին Դիլիջան գյուղի բնակիչները 1868 թ. սկսած բողոքներ են ներկայացրել հողասակավության կապակցությամբ։ 1883 թ. դիլիջանցիները նույն հարցով դիմում են Կովկասի կառավարչապետին, բայց մնում են անպատասխան[15]։ Նույն գավառի Կողբ և Բարանա գյուղերի բնակիչները լրացուցիչ հողաբաժիններ ստանալու ակնկալությամբ 1883 թ. դիմում են Ռուսաստանի պետական ունեցվածքների մինիստրին։ Գոհացում չստանալով, նրանք 1884 թ.[16] և ապա 1898 թ. նորից են դիմում վերոհիշյալ մինիստրին, սակայն դարձյալ ապարդյուն[17]։

Լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելու նպատակով 1884—1886 թթ. կառավարչապետին են դիմում նաև Ղազախի գավառի Թովուզղալա, Աղզիբարա, Աչասու, Թովուզքենդ, Քարվանսարա, Բաշքենդ, Խաչթառակ, Ճամբարակ[18] և այլ գյուղերի բնակիչներ։ Այդ խնդրանքները մերժվում են, չնայած որ նույն թվականների տվյալների համաձայն Ղազախի գավառում պետական աղատ հողերը կազմում էին 5385 դեսյատին[19]։

Զանգեզուրի գավառի թե՛ կալվածատիրական և թե՛ պետական գյուղացիության հողային ապահովվածությունը նույնպես ծայրաստիճան անբավարար էր։ 1880-ական թթ. տվյալների համաձայն կալվածատիրական գյուղացիության մեկ շնչին ընկնող հողաբաժինը կազմում էր 0,73 դեսյատին[20]։ Գավառի պետական 57 գյուղերում այն չէր անցնում 2 դեսյատինից[21]։ Զանգեզուրի գյուղացիության հողասակավությունը գրավել է նաև Վ. Ի. Լենինի ուշադրությունը։ «Վերաբնակեցման հարցը» հոդվածում նշելով, որ Զանգեզուրի գավառում հողային ապահովվածությունը կազմում էր մինչև 0,6 դեսյատին մեկ շնչին[22], նա գրում էր, որ ցարիզմի վերաբնակեցման գաղութային քաղաքականության հետևանքով ավելի էր աճում գյուղացիների հողասակավությունը, որովհետև «վերաբնակեցման ֆոնդն ստեղծվում է բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով»[23]։ Եվ իսկապես, Ղազախի գավառի Ջարխեչ և հարևան գյուղերի հողասակավությամբ մտահոգվելու փոխարեն իշխանությունները դրանց մոտերքում հիմնեցին Գոլովինո և Նոր Դիլիջան գաղութները[24], որոնք անհամեմատ ավելի լավ էին ապահով-

15 Տե՛ս Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 2, թ. 74, 75։

16 Տե՛ս նույն տեղում, թ. 208, 214, 243։

17 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 396, ց. 9, գ. 259, թ. 1։

18 Տե՛ս Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 2, թ. 24, գ. 5, թ. 129, գ. 12, թթ. 2, 48, 90, գ. 13, թ. 63։ Տե՛ս նաև ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 43, թթ. 10, 13։

19 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 146։

20 Տե՛ս М. Исмаилов, Капитализм в сельском хозяйстве Азербайджана на исходе XIX—начале XX вв., Баку, 1964, էջ 107։

21 Տե՛ս И. Антелава, նշվ. աշխ., էջ 312։

22 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 198։

23 Նույն տեղում։

24 Տե՛ս Խ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 182։

ված հողով, քան հին գյուղերը։ Օրինակ, Նոր Դիլիջան գյուղում մեկ ծխին հասնում էր 19,76 դեսյատին վարելահող, իսկ Հին Դիլիջանում՝ 3,49 դեսյատին։ Մեկ շնչին ընկնող հողաբաժինը կազմում էր Նոր Դիլիջանում՝ 6,83, իսկ Հին Դիլիջանում՝ 1,89 դեսյատին[25]։

Զանգեզուրի գավառի և ընդհանրապես ամբողջ Արևելյան Հայաստանի ամենամեծ գյուղի՝ Խնձորեսկի բնակիչները լրացուցիչ հողեր ստանալու նպատակով 1871 թ. սկսած դիմել են տարբեր հասցեներով։ 1882—1884 թթ. այդ գյուղի 39 ընտանիքներ Կովկասի կառավարչապետից թույլտվություն են խնդրել տեղափոխվել պետական ազատ հողերի վրա ու հիմնել նոր բնակավայր, որպեսզի թեթևացնեն թե՛ իրենց և թե՛ համագյուղացիների վիճակը[26]։ Լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելու խնդրանքով 1886 թ. պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին են դիմել նույն գավառի Բազարչայ գյուղի բնակիչները[27]։

1894—1896 թթ. ընթացքում Ղազախի գավառի Հախում, Թաթլիքենդ, Թովուզքենդ, Վերին Ղզըլբուլախ, Ղրղի, Քարվանսարա, Խաչթառակ գյուղերի բնակիչները քանիցս դիմել են պետական ունեցվածքների Ելիզավետպոլի նահանգային վարչությանը՝ խնդրելով իրենց տրամադրության տակ թողնել Մուրղուզ սարի վրա գտնվող որոշ արոտավայրեր[28]։ 1896 թ. Վերին Ղզըլբուլախ, Թաղաքենդ, Ղրղի և Զորաթան գյուղերի բնակիչները նույն խնդրանքով համատեղ դիմում են պետական ունեցվածքների մինիստրի Կովկասի լիազորին։ Նրանք նշում են նաև, որ մնացած արոտավայրերն էլ Շամշադինի անտառապետը ինքնակամ վաճառում է զանազան անձանց[29]։ Ուշադրավն այստեղ խնդրագրի կոլեկտիվ բնույթն է, մի բան, որ հաղվադեպ է հանդիպում արևելահայ գյուղացիական շարժումների պատմության էջերում։

Բնակչության բնական աճը և երկարատև ընդմիջումներով կատարվող հողավերաբաժանումները նպաստում էին հողասակավության խորացմանը։ Ալ. Երիցյանը նշում է, որ Շամշադինի տեղամասի հին գյուղերում այնքան վաղուց չեն եղել վերաբաժանումներ, որ ներկա սերունդը չի հիշում այդպիսիք[30]։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում այդ հանգամանքը նպաստում էր հողերի համակենտրոնացմանը ունևոր անձանց ձեռքում։ Պետական ունեցվածքների մինիստրի կովկասյան լիազորը 1894 թ. Վերին Աղդան գյուղի առնչությամբ նշում էր, որ գյուղական առանձին ծխերի միջև հողերը խիստ անհավասարաչափ են բաշխված[31]։

Լրացուցիչ հողաբաժիններ ձեռք բերելուց բացի պետական շատ գյուղերում բնակչության մտահոգության առարկան էր եղած հողերը ունևոր անձանց ոտնձգություններից պահպանելը։ Վերջիններս զանազան ճանապարհներով ձգտում էին տեր դառնալ գյուղացիական հողաբաժիններին և դրան

25 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 249—250։
26 Տե՛ս Ադրբ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 2, թթ. 58—60.
27 Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 20։
28 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 243, ց. 6, գ. 85, թ. 5։
29 Տե՛ս նույն տեղում, թ. 9—10։
30 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 97։
31 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 153, թ. 6։

հասնելու համար միջոցների մեջ խտրություն չէին դնում[32]։ Այսպես, Ջորաթան գյուղի կալվածատեր Մելիք-Քալանթարյանները թովուզքենդցիներին պատկանող հողակտորն իրենց ձեռքը գցելու համար ապավինում են Ելիզավետպոլի օկրուգային դատարանին[33], իսկ միայն Ղրղի գյուղի բնակիչներից գավթում են շուրջ 200 դեսյատին հող[34]։ Մասնավոր անձանց կողմից նման գավթումների կապակցությամբ իշխանությունների օգնությանն են դիմում Նավուր, Ուզունթալա, Աչասու գյուղերի բնակիչները[35]։ 1870—1885 թթ. ընթացքում Ղազախի գավառի պետական գյուղացիները զրկվել են 2630 դեսյատին հողից։ Պետական 22 գյուղեր, այդ թվում՝ Ղարադաշը, Լալաքենդը, Աղզիբարան, Կուլալին, Թաղաքենդը, Ղալաչան, Կոթիքենդը, Ջողաղը և այլն մասնավոր անձանց կողմից ենթարկվել են մոտ 10 գավթումների[36]։

Զանգեզուրի գավառի Խնձորեսկ և Տանձատափ գյուղերի բնակիչները 1878—1884 թթ. ընթացքում քանիցս դիմել են իշխանությունների օգնությանը՝ պատժելու ոմն Սուլթանովի, որը գավթում էր իրենց հողերն ու իր կամայականություններով տանջում գյուղացիներին։ Բանը հասնում է այնտեղ, որ նա մոտ 30 զինված մարդկանցով հարձակվում է Տանձատափ գյուղի բնակիչների վրա, որոնք համարձակվել էին վարել վիճելի հողերը։ Դրա հետևանքով գյուղացիներից մի քանիսը վիրավորվում են։ Սակայն այդ հարցը չի արժանանում իշխանությունների ուշադրությանը և տարիներ շարունակ դրա լուծումը ձգձգվում է[37]։

Զանգեզուրի գավառի Քարահունջ գյուղի բնակիչները 1878 թ. ծավալուն խնդրագրով դիմում են Կովկասի փոխարքային։ Նրանք բողոքարկում են Ելիզավետպոլի շինական գործերի նահանգային ատյանի վճիռը, ըստ որի պետական մի մեծ հողակտոր դարձել էր ոմն հողատիրոջ սեփականությունը, իսկ գյուղացիներն ընկել էին վերջինիս համար լրացուցիչ պարհակներ կատարելու հոգսի տակ[38]։ 1888 թ. Ելիզավետպոլի նահանգապետին են դիմում նույն գավառի Կագիան պետական գյուղի բնակիչները։ Նրանք բողոքում են դատական որոշման դեմ, որի համաձայն որոշակի պարհակներ պետք է կատարեին հողատեր Սուլթանովի օգտին[39]։

Ունևոր անձանց կողմից հողերի գավթումներին գյուղացիները պատասխանել են համերաշխ պայքարով։ Միայն 1893—1895 թթ. ընթացքում Ռուսաստանի ամենաբարձրագույն ատյանը՝ Սենատը, երեք անգամ քննության առարկա է դարձրել Զանգեզուրի գավառի Բեխ գյուղի բնակիչների և հողատերերի միջև ծագած հողային վեճը[40]։ Ղազախի գավառի Բարանա գյուղի մոտ

32 Տե՛ս «Материалы...», т. IV, ч. I, էջ 64։

33 Տե՛ս նույն տեղում, հատ. II, մաս II, էջ 74։

34 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 243, ց. 3, գ. 456, թ. 1։ Տե՛ս նաև ց. 4, գ. 194։

35 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 10։ ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 247, թ. 1։

36 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 75—77։

37 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 798, թթ. 3—5։

38 Տե՛ս նույն տեղում, ֆ. 220, ց. 1, գ. 484, թթ. 5—12։

39 Տե՛ս Աղրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 30, թթ. 2—4։

40 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 381, ց. 29, գ. 18753։ Տե՛ս նաև ֆ. 1291, ց. 71, 1894 թ., գ. 68։

գտնվող «Միսխանա» կոչված հողակտորից տարիներ շարունակ գյուղացիները հավասարապես օգտվել են, սակայն 1897 թ. ամռանը, առանց գյուղացիների համաձայնության, Բարանայի հարուստ բնակիչ Ամիրաղյանցը իր ծառաներին հրամայում է հնձել «Միսխանայի» խոտը։ Գյուղացիներն իմանալով այդ, շտապում են «Միսխանա»՝ հեռացնելու Ամիրաղյանցի ծառաներին։ Կողմերի միջև ծագում է կռիվ, սկզբում փայտերով, իսկ հետո՝ հրացաններով։ Վիրավորվում են 9 հոգի, որոնցից երկուսը՝ ծանր[41]։

Վիճելի հողեր կային ամենուրեք։ Զանգեզուրի գավառի միայն Կավարտ գյուղում դրանք կազմում էին շուրջ 4100 դեսյատին[42]։ Պետական գյուղացիության տրամադրության տակ գտնվող հողերից վիճելի էին 8748 դեսյատին, իսկ գանձարանի և մասնավոր անձանց միջև Զանգեզուրի գավառում վեճ էր գնում ավելի քան 118.669 դեսյատին հողերի շուրջը[43]։

Հողային սահմանների անորոշությունը լուրջ վեճեր էր ծնում նաև գյուղերի միջև։ 1850-ական թթ., օրինակ, Ղազախի գավառի Լալաքենդ և Ուզունթալա գյուղերի միջև վեճ է ծագում 35 դեսյատին հողի շուրջը, որն անընդմեջ ձգվում է մոտ 30 տարի։

1890-ական թթ. արևելահայ գյուղում պայքար էր գնում հողի վերաբաժանման համար։ Ղազախի գավառի Վերին Աղդան գյուղից «Մշակ» թերթին գրում էին. «Հողային հարցը ոչ միայն մեզանում, այլև շրջակա Քարվանսարա, Ուզունթալա և այլ գյուղերում հերթական է դարձել։ Կյանքի պայմանները անհրաժեշտորեն առաջ են բերել հողը շնչի վրա բաժանելու արդարացի սկզբունքը. այդ պատճառով խոշոր անհամաձայնություններ են ծագում հողատեր և անհող գյուղացիների միջև»[44]։ Գյուղացիական պայքարն ավելի էր թեժանում հողաբաժանարարների չարաշահումների հետևանքով։ 1891 թ. Զանգեզուրի գավառի Մահմուդլու գյուղի բնակիչները հողաբաժանարարի որոշումների կապակցությամբ բողոք են ներկայացնում Թիֆլիսի դատական ատյանին[45], իսկ Ղազախի գավառի Բաշքենդ գյուղի բնակիչները դիմադրում են իրենց գյուղի հողային սահմանների «ճշգրտման» նպատակով այդտեղ ժամանած աստիճանավորներին. փայտերով զինված գյուղացիները հարձակվում են նրանց վրա և վռնդում գյուղից[46]։

Գյուղացիները շատ էին տուժում բաղմապիսի ծանր հարկերից, դրանց անարդար բաշխումից և հարկահավաքման ժամանակ թույլ տրվող չարաշահումներից։ Զանգեզուրի գավառի միայն պետական գյուղացիներից գանձվող հարկերը 1885 թ. կազմում էին 118094 ռ.[47]։ 1891 թ. Կովկասի կառավարչապետին են դիմում նույն գավառի Ալիդարա գյուղի բնակիչները և խնդրում թեթևացնել իրենցից գանձվող պետական հարկերը։ 1898 թ. համանման խնդ-

---

41 Տե՛ս «Մշակ», 1897, № 92։

42 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 381, ց. 34, գ. 5154, թ. 1։

43 Տե՛ս «Материалы..», т. IV, ч. I, էջ 34, 40։

44 «Մշակ», 1900, № 68։

45 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գգ. 1057, 1267։

46 Տե՛ս Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 183, ց. 2, գ. 4186, թ. 7։

47 Տե՛ս Н. Антелава, հիշ. աշխ., էջ 346։

բանքով դիմում են նաև Արծվանիկ գյուղի բնակիչները[48]։ Այդ խնդրանքները մերժվում են։

Գյուղացիական պայքարի սլաքներից մեկն էլ ուղղված էր ցարիզմի հարկային քաղաքականության դեմ։ Գյուղացիները հրաժարվում էին վճարել հարկերը, որոնք կուտակվելով վեր էին ածվում ապառքների։ Եթե 1880 թ. Ղազախի գավառում ապառքները կազմել են 73102 ռուբլի[49], ապա 1890 թ. դրանք հասել են 331814 ռուբլու[50]։ Ապառքներն արագորեն աճում էին նաև Զանգեզուրի գավառում. այսպես, օրինակ, 1885—1890 թթ. ընթացքում ապառքներն այստեղ ավելացել են մոտ յոթ անգամ՝ 21000 ռուբլուց հասնելով 143750 ռուբլու[51]։ Գյուղացիները հաճախ էին խնդրում երկարաձգել դրանց վճարման ժամկետները։ 1892 թ. նման հարց են բարձրացնում Զանգեզուրի գավառի Օխչի գյուղի բնակիչները[52]։ Այդ խնդրանքով 1894 թ. Ելիզավետպոլի նահանգապետին են դիմում նույն գավառի Բարթազ գյուղի բնակիչները։

Անդրկովկասի հարկային համակարգն ուսումնասիրող հետազոտողներից մեկը նշում էր, որ երկրամասում չկա մի գավառ, չկա մի անկյուն, ուր ճանապարհային պարհակը դժգոհություն և տագնապ չհարուցի գյուղական բնակչության մեջ[53]։ Ելիզավետպոլի նահանգապետի՝ ներքին գործերի մինիստրին հղած գրությունից իմանում ենք, որ 1899 թ. դեկտեմբերին Զանգեզուրի գավառի Գորիս գյուղի բնակիչները հրաժարվել են ճանապարհների վերանորոգման աշխատանքներից։ Մոտ 70 գյուղացիներ լուրջ դիմադրություն են ցույց տվել Զանգեզուրի գավառապետին[54]։

Դարավերջին Զանգեզուրի գյուղերում տիրող իրավիճակը, գյուղացիության քայքայվածությունը, նրա առօրյա հոգսերն իրենց գեղարվեստական մարմնացումն են գտել հայտնի գյուղագիր, ծնունդով զանգեզուրցի Ա. Ադելյանի պատմվածքներում։ «Էս բոպեիս էնպես տուն կա, որ ցորեն չունի տանը և չոր մրգերով է կառավարվում։ Ոմանք կորեկ են ուտում, շոր չունեն հագներին, պարտքն էլ խոմ անպակաս է։ Հրաման էր եկել, որ երկու շաբաթում հարկ ժողովեն. հրես երեք շաբաթ լրացել է, էլա ոչինչ չի հավաքվել։ Ամենքն էլ աչքները տնկել են դեպի Բաքու, թե էնտեղից փող գա— հարկ տան»[55]։ Մի այլ պատմվածքում Ադելյանի հերոսներն ըմբոստանում են գյուղական վաշխառուի դեմ. «Մինչև ե՞րբ համբերենք, մինչև ե՞րբ տանենք էս դրությունը,— ասում են գյուղացիները։ ...Ժամանակի ընթացքում, իհարկե, շատանում էր տրտնջացողների թիվը և նրանց մեջ օրեցօր աճում էր թշնամու դեմ մաքառելու և կռվելու պահանջը»[56]։

Արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ուղեկցվում էր գյուղացիական մասսաների պրոլետարացման աճով։ Իրենց ընտանիքների գոյությունը պահպանելու համար բազմաթիվ գյուղացի-

48 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գգ. 1006, 2312։
49 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 25, գ. 297, թ. 215։
50 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1284, ց. 223, գ. 125, թ. 96։
51 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 212, թ. 97, գ. 125, թ. 96։
52 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 6, գ. 1142, թ. 4։
53 Տե՛ս Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 206։
54 Տե՛ս ЦГАОР, ф. ДП, 3-е д-во, 1900 г., д. 1, ч. 31, лит. Г, л. 8.
55 «Հայ գյուղագիրներ», Երևան, 1950, էջ 99։
56 Նույն տեղում, էջ 86։

ներ մեկնում էին երկրամասի արդյունաբերական կենտրոնները, համալրում Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի շարքերը։ Զանգեզուրի գյուղացիությունը հիմնականում բռնում էր Բաքվի ճանապարհը։ 1884 թ. գավառից արտագնացության էր դիմել մոտ 3000 մարդ[57], իսկ 1895 թ. այդ թիվը հասել էր 5000-ի[58]։

Սովի ճիրաններում տառապող գյուղացին ստիպված դիմում էր վաշխառուին, որը դարավերջին դարձել էր գյուղի իսկական տերը։ Վաշխառությունը մեծ տարածում էր գտել նաև Զանգեզուրում։ «Մշակ» թերթին Զանգեզուրի Արծվանիկ գյուղից գրում էին. «Մեծ տոկոսներով վող տալը սովորական բան է գյուղերում, բայց վերջին տարիներին այս սխտը գյուղական համայնքի մեջ դարձել է ծայրահեղ։ Հացի պակասության հետևանքով և պարտքերը վճարելու համար Ղափանի գյուղերը դատարկվել են տղամարդկանցից, որոնք խմբերով դիմում են պանդխտության՝ ընտանիքի անհրաժեշտ պիտույքները հոգալու համար»[59]։ Զանգեզուրի գավառի մեկ այլ գյուղից՝ Մազրայից ուղարկած նամակում պատմվում է Սիսիանի գավառամասի հայտնի վաշխառու, «գյուղացու արյունը ծծող» Հախնազարյանի մասին, որը 30—40 տոկոսով փող էր պարտք տալիս գյուղացիներին[60]։

Գյուղացիները հաճախ էին բողոքում իրենց տանուտերերի ապօրինի գործողությունների դեմ, առաջվա նման լուռ ու հնազանդ չէին ընդունում նրանց վճիռները։ 1888 թ. Զանգեզուրի գավառի Ալիլու գյուղի բնակիչները Ելիզավետպոլի նահանգապետին ուղարկած բողոքագրում նշում են, որ գյուղի տանուտերը տանջում է իրենց, ուշադրություն չի դարձնում գյուղացիների բողոքներին, անպատվում է ու կաշառքներ վերցնում և որ այդ ամենի մասին տեղյակ է Զանգեզուրի գավառապետը[61]։

Ժամանակակիցներից մեկն անդրադառնալով արևելահայ, մասնավորապես Ղարաբաղի և Սյունիքի, գյուղացիության տնտեսական դրությանը նշում է. «Մի սարսուռ ես զգում, երբ մոտիկից ծանոթանում ես գյուղացիների դատաստանական գործերի հետ. որքա՜ն ղրկանք, որքա՜ն չարչարանք ու տանջանք, որքա՜ն անիրավություններ գյուղի տանուտերի կամ գյուղական դատավորի կողմից...»[62]։ Ալ. Երիցյանը խոսելով տանուտերերի մասին, գրում էր, թե գյուղացիները չեն հնազանդվում նրանց հրամաններին, հաճախ են մերկացնում կաշառակերության և այլ անօրինականությունների մեջ[63]։

Ղազախի գավառի Քարվանսարա գյուղի բնակիչները հաշիվ են պահանջում իրենց տանուտերից և ապա նրան հանելու համար դիմում նահանգապետին։ Այդ օրինակին են հետևում նաև Վերին Աղդան գյուղի բնակիչները[64]։ Նման ելույթներն ավելի մեծ չափերի են հասնում և գյուղացիական բացահայտ պայքարի վերածվում նույն գավառի Կողբ գյուղում[65]։

---

57 Տե՛ս «Նոր-Դար», 1885, № 139։
58 Տե՛ս «Մշակ», 1896, № 3։
59 «Մշակ», 1898, № 182։
60 Տե՛ս նույն տեղում, 1900, № 168։
61 Տե՛ս Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 61, ց. 5, գ. 55, թ. 3։
62 «Հայ գյուղացի», գրեց Ռուսահայ, Մարսել, 1885, էջ 18։
63 Տե՛ս «Материалы...», т. II, ч. II, էջ 58։
64 Տե՛ս «Մշակ», 1896, № 129, 1897, №№ 56, 141։
65 Տե՛ս նույն տեղում, 1897, № 104։

Պատահական չէ, որ տանուտերական «ընտրությունների» ընթացքում գյուղերում հուզումներ էին բռնկվում։ 1901 թ. հունվարի 17-ին գյուղական պաշտոնատար անձանց ընտրությունների անարդարության կապակցությամբ Զանգեզուրի գավառի Ռաբանդ գյուղի բնակիչները ղինված գիմագրություն են ցույց տալիս հաշտարար միջնորդին, պրիստավին և պահակախմբին։ Իշխանությունների համար այդ անսպասելի չէր, սակայն նրանք ամեն կերպ ձգտում էին անցկացնել իրենց թեկնածուին։ Այդ պարզորոշ երևում է Ելիզավետպոլի օկրուգային դատարանին ուղղած պրիստավի զեկուցագրից. «Ռաբանդ գյուղն էի հրավիրվել նաև ես՝ աջակցություն ցույց տալու և կանխելու համար նախատեսվող խոշոր անկարգությունները»[66]։ Գյուղացիները չեն ցանկանում քվեարկել վերևից պարտադրվող թեկնածուի օգտին։ «Մեզ բոլորիս անպատվեցին ամենավիրավորական խոսքերով,— կարդում ենք պրիստավի զեկուցագրում,— և քարեր, փայտեր նետելով ու հրացաններից կրակելով իմ դեմ մահափորձ կատարեցին»[67]։ Զանգեզուրի գավառապետը Ելիզավետպոլի նահանգապետին տեղեկացնում է, որ 12 «խառնակիչներ» արդեն ձերբակալվել են[68]։ Ահա թե ինչպիսի արդյունքի հասան արդարության ձգտող գյուղացիները։

Զանգեզուրից «Մշակ» թերթին ուղարկված մի թղթակցության մեջ կարդում ենք. «Բացի սովից և ավազակներից, աղքատ գյուղացին մի թշնամի էլ ունի, որի դեմ դժբախտաբար նա ո՛չ զենք ունի և ո՛չ էլ պաշտպանվելու միջոց։ Այդ թշնամին հոգևորականներն են, որոնք աջ և ձախ կորզում են անգրագետ գյուղացուց, որը բնավ չի կասկածում նրանց ազնվության վրա»[69]։ Զանգեզուրի գավառի 9 գյուղեր պատկանում էին Տաթևի վանքին[70]։ Վերջինս, չբավարարվելով եղածով, ձգտում էր ավելի ընդարձակել իր տիրույթները։ Նման պարագաներում վանքի և Շխլար պետական գյուղի միջև առաջացավ հողային վեճ, որն այնքան բորբոքվեց, որ հասավ մինչև Սենատ[71]։ Վանքապատկան Տաթև գյուղի սակավահող 26 ընտանիքներ, որոնք գտնվում էին տնտեսական անմխիթար պայմաններում և անչափ տուժում էին հոգևորականների կամայականություններից, 1884 թ. դիմում են Կովկասի կառավարչապետին՝ խնդրելով թույլատրել իրենց տեղափոխվել պետական աղատ հողերի վրա և դասվել պետական գյուղացիության շարքը։ Տաթևցիների հողային պայմանները բարելավելու անհրաժեշտությունը ստիպված էր ընդունել անգամ Ելիզավետպոլի նահանգապետը, սակայն վերադաս օրգանների կողմից գյուղացիների խնդրանքը մերժվում է[72]։

Հողասակավությունը, հարկային ծանր համակարգը, ցարական աստիճանավորների և հողատերերի կողմից գյուղացիական հողաբաժինների զավթումներն ու այլ անօրինականությունները նպաստում էին ագրարային հուզումների ծավալմանը։ Ղազախի և Զանգեզուրի գավառներից ուղարկված գյուղացիական բազմաթիվ խնդրագրերն ու բողոքագրերը դրա վկայությունն են։

---

66 Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 183, ց. 2, գ. 4611, թ. 11։

67 Նույն տեղում։

68 Տե՛ս նույն տեղում, թ. 6։

69 «Մշակ», 1896, № 12։

70 «Материалы...», т. IV, ч. I, էջ 32։

71 Տե՛ս ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 1, գ. 444, թ. 3։

72 Տե՛ս Ադրբեջ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 1, գ. 2, թթ. 124, 127։

ИЗ ИСТОРИИ КРЕСТЬЯНСТВА ЗАНГЕЗУРСКОГО И КАЗАХСКОГО УЕЗДОВ

В. Х. ОВАКИМЯН

(Резюме)

В конце XIX в. крестьянство Зангезурского и Казахского уездов втянулось в сферу капиталистических отношений, что привело к определенным сдвигам в селе. Малоземелье, тяжелая налоговая система, ростовщический капитал и др. способствовали усугублению процесса разложения крестьянства. Его тяжелое экономическое положение способствовало распространению волнений в государственных селениях Казахского уезда и в государственных, помещичьих и монастырских селениях Зангезурского уезда.